

ԳԼՈՒԽ Է

Ժամանակն արդեն ձմեռնային՝ ցուրտը սաստիկ էր այն տարի Չայաստանի բարձր գաւառներուն մէջ: Եւ այդ Թաւուսկերտի պալատին մէջ, ուր պառաւ Տիկին մը քաշուած կը բնակէր, որ շատ փառք, մեծութիւն, պատիւ տեսած էր իւր երկանը կենդանութեան եւ որդուոյն առաջի տարիները, եւ որ այն օրերը կը յիշէր, երբ արքայից արքային ընծաներն ու նուիրակները իրարու կը յաջորդէին, յաղթութեանց աւետաբեր սուրհանդակները շարունակ իւր դուռը կը բախէին եւ Պարսկաստան ու Չայաստան Բազմայադթ անունը Բագրատունեաց իշխանին կ'ուտային. իսկ հիմա ինք Տիկինը մոռցուած, բարձիթողի եղած, այդ հայոց կանանց առաջինը երբեմն պատուոյ եւ հարստութեան մէջ, կը նստեր տխուր ձմեռուան պէս, եւ կը համրեր օրերը, որ լուր չէր առած իւր սիրական եւ անդրանիկ որդուոյն:

Թեպետ մահ եւ աքսոր տխրութիւն բերեր էին այդ պալատը, եւ Տիկինը սգաւոր՝ բայց սպասաւորաց, աղախնայց եւ թիկնապահաց թիւն ու հանդերձանքը գրեթէ չէր նուազեալ: Երկրին կառավարութիւնը թեպետ Սարգիս՝ բնիկ Տայեցի իշխանի մը ձեռքն էր, բայց ոչ երբեք առանց Բագրատունի Տիկնոջ խորհուրդին բան մը կը կատարուէր, վասնզի այս Սարգիս այն քաջերէն էր, որ Սմբատ Մարգալանի բախտին եւ դրօշակին հետեւելով՝ փառաց եւ մեծութեանց տէր եղած էին:

Երբ այսպէս Տիկինը տխուր եւ միայնակ նստած էր, իմացուցին իրեն թէ Սարգիս իշխանը կը խնդրէր զինք տեսնել, եւ թէ հետը երիտասարդ մ'ել կար: Եւ Սարգիս մտնելով խորին յարգանօք ողջունելէն վերջ Տիկինը՝ ներկայացուց Ներսէս Սպան, որ նոր կը դառնար Յունաստանէ եւ որ նամակ ուներ Վարազտիրոց Ասպետն առ Տիկինն եւ առ Թեոդորոս Ռշտունի:

Բագրատունի Տիկինը առաւ իւր որդուոյն նամակը եւ շտապաւ կ'արդալէն վերջ երկրորդեց եւ երրորդեց իր ընթերցմունքը, վասնզի շատ համառօտ էր եւ դառնալով զօրականին՝

— Կը տեսնես, որդեակ,— ըսաւ,— իմ զակիս նամակը շատ համառօտ է. քեզմէ պէտք է տեղեկութիւն առնեմ, ինչպէս ինք կը գրէ. ինչպէ՞ս տեսար զինք, լաւ՞ է, առո՞ղջ է, ինչպիսի՞ կղզի է այս աքսորանաց կզգին. միթէ՞ ազատելու յոյս չի կա...